ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար դատական ավտոմատացված համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
/հայտերի բացման նիստի/

ք. Երևան «11» հունվարի 2019թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Եղիազարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ,

հանձնաժողովի քարտուղար՝

Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Միմ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

-հայտերը բացվել են www.armeps.am/eaction կայքի՝ էլեկտրոնային աճուրդների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով,

-հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 15-րդ օրվա ժամը 12:00-ն:

2. Տեղեկություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.

Գնման սույն ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային փոստը, ՀՎՀՀ-ն
«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ	info <info@masys.am>, 01555207

4. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-18/02» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Չափաբաժին 1. Ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ

Հ/Հ	Ընկերություն	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ	-	32000000	0	32000000	23160000	0	23160000

6. Տվյալներ՝ յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

6.1. «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը /դիմում-հայտարարությունները/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /դիմում-հայտարարության/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

7.1 «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /դիմում-հայտարարությունները/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

<u>1-ին</u> չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ին.

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովի քարտուղարին.

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

2) համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2019թ. հունվարի 16-ը ներառյալ ներկայացնել ՄԱՍ II-ի 3-րդ բաժնով (ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ) նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Ղեկավարվելով Կարգի 22-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2019թ. հունվարի 17-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Ա. Եղիազարյան

(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Պետրոսյան

(ստորագրություն)

Ա. Թամրազյան

(ստորագրություն)

Գնումները համակարգող՝

Դ. Թովմասյան

(ստորագրություն)